ռովեցաւ յոյժ, և այլ ոչ եւս կարացեալ մնալ անդ՝ դարձաւ 'ի Կոստանդինուպոլիս, բայց ոչ եդիտ զՎէզիրն Իպրահիմ, զի գնացեալ էր նա 'ի պատերազմ. կարդեալ 'ի տեղի իւր փոխանորդ զՄուստաֆայ Փաշայ՝ ազգաւ Արնաւուտ, սիրող քրիստոնէից՝ և ձեռնտու գործոց նոցին։ առ սա դիմեաց Պատրիարքն պտանել օգնութիւն ընդդէմ Լատինաց. բայց նա չհամարձակեցաւ առնել ինչ, այլ խրատ ետ եւ ասէ՝ խնդիրն որ 'ի մէջ ձեր եւ Լատինաց, բաց յԱրքայէ ոչ ոք կարէ լուծանել. և յորժամ յանդիման լիցիս խնդրել ինչ 'ի նմանէ, հարցանէ նա զազգն և զտեղին զոր խնդրես, և ոչ կամի խափանել զիրաւունս ուրուք, եւ նորա արարեալ այնպէս. ապա մատոյց գիր աղաչանաց՝ և Արքայ կոչեաց զտեղակալ Վէզիրին զՄուստաֆայ՝ և 'ի հարցանել նմա վասն խնդրոյն՝ նա հաստատեաց զբանս Յունաց. և Թագաւորն կոչեալ զմին 'ի ծառայից իւրոց ասէ՝ երթ յԵրուսաղէմ, և դարձո առ Յոյնս զամենայն տեղիս՝ զոր առեալ են Լատինք։ Դարձաւ Թէոփանէ հրովարտակաւ և ոստիկանաւ 'ի Ս. Քաղաքն՝ կատարել զհրաման Արքային. մին 'ի տաճարն Ս. Յարութեան և բացին զդուռն Գերեզմանին Քրիստոսի, զոր փակեալ էին Լատինք ամիս 9. և տիրեցին նմա Յոյնք, նաեւ Գողգոթային՝ և այրին Ծննդեան. և Պատրիարքն ետ հրաման քահանայից իւրոց՝ բառնալ զկանթեղս Լատինաց՝ 'ի Գողգոթայէ՝ և յայրէն Ծննդեան. իբրեւ տեսին Հայք՝ թէ բարձին զկանթեղս Լատինաց, բարձին նաեւ ինքեանք զկանթեղս իւրեանց եւ հանին արտաքս, Յոյնք հարցին ցնոսա զպատճառն թէ՝ ընդէ՞ր հանէք զկանթեղս, և ո՞վ հալածէ զձեզ. Հայք ետուն պատասխանի, դուք հանիք զկանթեղս Լատին եղբարց մերոց, և մեք ոչ կամիմք բաժանիլ 'ի նոցանէ 'ի բարիս և 'ի չարիս, գիտեմք զի զկնի սակաւուց տիրեն Լատինք Ս. Տեղեաց, և զկանթեղս իւրեանց կախեն 'ի տեղիս, որպէս և էրն, յայնժամ և մեք կախեմք զկանթեղս մեր (1)։ Թէպէտ գրեալ էր 'ի հրովար-

---

(1) Բանք Յոյն պատմագրին երեւի զանգեալ սուտ թեամբ։ զի յաւաջագոյն Լատինք բարձին զկանթեղս Հայոց և արգելին զնոսա յայրէն Ծննդեան։ յետ բազմադիմի խռովութեանց։ որպէս գրեցաք 'ի նախընթաց գլուխս։